



California's protection & advocacy system
Toll-Free (800) 776-5746

Ի՞նչպես կարող է ՁԻԱՅ Medi-Cal այլընտրանքային ծրագիրն օգնել ձեզ՝ ստանալ ձեզ անհրաժեշտ խնամքը տանը

Փոփոխությունն առ օգոստոս 2017թ., Հրապ. #5435.10 - Armenian

Ի՞նչ է ՄԻԱՎ/ՁԻԱՅ Medi-Cal այլընտրանքային ծրագիրը:

ՄԻԱՎ/ՁԻԱՅ Medi-Cal այլընտրանքային ծրագիրը («ՁԻԱՅ-ի այլընտրանքային ծրագիր») ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդ անձանց համար նախատեսում է հիվանդության հսկողություն և անմիջական խնամքը որպես շուրջօրյա խնամքի կենտրոնի կամ հիվանդանոցային բուժման այլընտրանք: Դուք կարող եք օգտվել այս ծառայությունից, որպեսզի մնաք տանը կամ վերադառնաք տուն որևէ բուժհաստատությունից կամ խնամքի կենտրոնից:

Ո՞վ է իրավունակ ծրագրի համար:

Իրավունակ անձինք պետք է.

- Ունենան ՄԻԱՎ հիվանդության կամ ՁԻԱՅ-ի գրավոր ախտորոշում՝ տրված իրենց առաջնային բուժող բժշկի կողմից,
- ունենան համապատասխան առողջական վիճակ, որը թույլ կտա ստանալ խնամք տնային պայմաններում,
- ունենան Medi-Cal-ի իրավունակություն այլընտրանքային ծրագրում ընդգրկվելու օրը և դրանից հետո յուրաքանչյուր ամիս,
- ունենան շուրջօրյա խնամքի կենտրոնի մակարդակին կամ ավելի բարձր մակարդակին և 60 կամ ավելի պակաս միավորին համապատասխանելու հավաստագրում, որը գնահատվել է

Կոգնիտիվ և ֆունկցիոնալ ունակության մակարդակների գնահատման գործիքով:

Ի՞նչ ծառայություններ են մատուցվում այս այլընտրանքային ծրագրով:

- Բուժքույրական խնամք և սոցիալական ծառայություն
- Տան տնտեսվարի ծառայություններ, օրինակ ճաշի պատրաստում և առօրյա կենցաղային գործեր, գնումներ և այլն
- Տնային խնամք
- Փոքր ֆիզիկական հարմարեցումներ տանը, օրինակ թեքահարթակների, բռնակների տեղադրում, դռների բացվածքների լայնացում և այլն
- Հատուկ բժշկական սարքավորումներ/բժշկական պարագաներ
- Որակավորված բուժքույրական ծառայություն – բուժքույրեր/լիցենզավորված բուժքույրեր
- Հոգեթերապիա
- Ֆինանսական օգնություն երեխաների/խնամակալության տակ գտնվող փոքրահասակ երեխաների համար
- Սննդակարգի խորհրդատվություն
- Տեղափոխում ոչ շտապ բուժօգնության նպատակով
- Տուն առաքվող ճաշեր

Լրացուցիչ տեղեկատվություն.

ՁԻԱՀ Medi-Cal-ին փոխարինող այլընտրանքային ծրագրով նախատեսվող ծառայությունները շահառուներին տրամադրվում են անվճար, սակայն համավճարով Medi-Cal ծրագրում ընդգրկված անհատները պետք է յուրաքանչյուր ամիս վճարեն իրենց ծախսային մասնաբաժինը՝ այդ ծառայություններին իրավունակ լինելու համար 2017թ. հունվարի 1-ից գործում է տարեկան **\$25,727** գումարի չափով ծախսային սահմանափակումը:

Միաժամանակ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ընդգրկվել հետևյալ ծրագրերում կամ ստանալ հետևյալ ծրագրերի ծառայությունները. Medi-Cal-ի Հոսպիտալին ծրագիր, Պետական ապահովագրական ծրագրով նախատեսվող հիվանդության հսկողության ծառայություններ, Նպատակաուղղված հսկողություն որպես լրացում ՁԻԱՀ-ի այլընտրանքային ծրագրին կամ Medi-Cal-ի տնային և համայնքահեն ծառայությունների մեկ այլ այլընտրանքային ծրագիր:

ՀՆԱՐԱՎՈՐ Է միաժամանակ ընդգրկվել Medicare Յոսպիս ծրագրում:

ՁԻԱՅ-ի այլընտրանքային ծրագրի գործակալությունները կարող են տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն իրավունակության և ծրագրով տրամադրվող ծառայությունների, ընդգրկման և բուժքրոջ ու սոցիալական աշխատողի միջոցով հիվանդության անմիջական հսկողություն իրականացնելու վերաբերյալ: Եթե դուք իրավունակ չեք ՁԻԱՅ-ի այլընտրանքային ծրագրի համար, դուք կարող եք իրավունակ լինել նույն գործակալության կամ տվյալ գործակալության գլխավոր գրասենյակի այլ ծրագրերի համար: Գործակալությունների ցանկն ըստ վարչաշրջանների տե՛ս ստորև: Այլ ռեսուրսների համար տե՛ս https://www.cdph.ca.gov/Programs/CID/DOA/Pages/OA_care_mcwp.aspx.

ՁԻԱՅ-ի այլընտրանքային ծրագրի ծառայություններն ստանալու մասին տեղեկատվություն ստանալու համար կարող եք զանգահարել ձեր վարչաշրջանի ստորև նշված գործակալությանը: Եթե ձեզ անհրաժեշտ է տեղեկատվություն Medi-Cal-ին դիմելու կարգի վերաբերյալ, կարող եք այցելել՝ <http://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/ApplyforMedi-Cal.aspx>

ՁԻԱՅ-Ի ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՂՆԵՐ

Կալիֆորնիայի Առողջապահության վարչություն
 ՁԻԱՅ-ի գրասենյակ, ՄԻԱՎ-ով հիվանդների խնամքի մասնաճյուղ

Սպասարկվող վարչաշրջաններ	Գործակալության անվանում	Գործակալության հասցե	Գործակալության հեռախոսահամար
Ալամեդա	Իսթ Բեյի ՁԻԱՅ ծրագիր	8400 Enterprise Way Oakland, CA 94621	(510) 663-7979
Ամադոր, Կալավերաս, Թուլալեմ	Սիեռա HOPE	1168 Booster Way Angels Camp, CA 95222	(209) 736-6792
Բյուտ, Բոլուսա, Գլեն, Շաստա, Սատեր, Թիհամա,	Տնային և առողջապահական խնամքի հսկողության կենտրոն	1398 Ridgewood Drive Chico, CA 95973	(530) 343-0727

Թրինիթի, Յուբա			
Կոնտրա Կոստա	Կոնտրա Կոստայի Առողջապահության վարչաշրջանային բաժին	597 Center Avenue Martinez, CA 94553	(925) 313- 6740
Էլ Դորադո, Նևադա, Փլեյսեր	Սիեռա Ֆուբիլիզի ՁԻԱՀ Հիմնադրամ	12183 Locksley Lane Auburn, CA 95602	(530) 889- 2437
Լեյք, Մենդոսինո, Սոնոմա	Համայնքում ինսամբի կազմակերպման կորպորացիա	301 South State Street Ukiah, CA 95481	(707) 468- 9347
Լոս Անջելես	ՁԻԱՀ-ի առողջապահական հիմնադրամ	1001 North Martel Avenue, Los Angeles, CA 90046	(323) 436- 5000
Լոս Անջելես	Լոս Անջելես-ի ՁԻԱՀ- ի ծրագիր	611 South Kingsley Drive, Los Angeles, CA 90005	(213) 201- 1600
Լոս Անջելես	AltaMed Առողջապահական ծառայությունների կորպորացիա	5427 E. Whittier Boulevard, Los Angeles, CA 90022	(877) 462- 2582
Լոս Անջելես	ՁԻԱՀ-ի ծրագիր փոքրամասնությունն երի համար	5149 West Jefferson Boulevard, Los Angeles, CA 90016	(323) 936- 4949
Լոս Անջելես	Սբ. Մարի Բժշկական կենտրոն	1045 Atlantic Avenue Long Beach, CA 90813	(888) 509- 2187
Լոս Անջելես	Տարզանա բուժական կենտրոններ	7101 Baird Avenue Reseda, CA 91335	(888) 777- 8565
Օրինջ	ՁԻԱՀ-ի ծառայությունների հիմնադրամ	17982 Sky Park Circle Irvine, CA 94621	(949) 809- 5700

Ռիվերսայդ, Սան Բերնարդինո	Դեզերթի ՁԻԱՅ-ի ծրագիր	1695 North Sunrise Way, Palm Springs, CA 92262	(760) 323- 4197
Սակրամենտո, Յոլո	Rx Staffing and Homecare, Inc.	4640 Marconi Avenue Sacramento, CA 95821	(916) 485- 8200
Սան Լուիս Օբիսպո	Բուժման աջակցության ցանց	130 Nipomo Street San Luis Obispo, CA 93401	(805) 781- 3660
Սան Ֆրանցիսկո	Ուեսթսայդի համայնքային ծառայություններ	1153 Oak Street San Francisco, CA 94117	(415) 431- 9000
Սանտա Կրուզ	Սանտա Կրուզի Առողջապահական ծառայությունների վարչաշրջանային գործակալություն	1060 Emeline Avenue Santa Cruz, CA 95060	(831) 454- 4313
Ստանիսլաուս	Ստանիսլաուսի Առողջապահական ծառայությունների վարչաշրջանային գործակալություն	830 Scenic Drive Modesto, CA 95350	(209) 558- 7000
Վենտուրա	Վենտուրայի Առողջապահության շրջանային վարչություն	3147 Loma Vista Road Ventura, CA 93003	(805) 652- 6267

[Մենք ուզում ենք լսել ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում: <https://docs.google.com/forms/d/1d6ezTI2M5UMAWU66exLbc1SQ9wDPzvtuS3AGR4-cgwE/viewform?c=0&w=1>](https://docs.google.com/forms/d/1d6ezTI2M5UMAWU66exLbc1SQ9wDPzvtuS3AGR4-cgwE/viewform?c=0&w=1)

Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Յոլոսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Յարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով:

Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս այստեղ.

[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html).